



**Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխտորֆ**
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդակալ

Միշտ մեջտեղում

Աշխարհի շատ օրացույցներում հուլիսը տարվա կեսը նշող ամիսն է: Մինչ երևույթների սկիզբն ու վերջը տոնվում են և հիշվում, հաճախ երևույթների միջին մասը անուշադրության է մատնվում:

Սկիզբը որոշումներ կայացնելու, ծրագրեր կազմելու, էներգիայի պոռթկումների ժամանակն է: Վերջը ցած գլորվելու ժամանակ է և կարող է առաջացնել ավարտի կամ կորստի զգացողություն: Մակայն պատշաճ հեռանկար ունենալու դեպքում, երբ մենք մեզ տեսնենք ժամանակի *մեջտեղում*, մենք կկարողանանք մեր կյանքը ոչ միայն մի փոքր ավելի լավ հասկանալ, այլ նաև ապրել այն մի փոքր ավելի իմաստալից ձևով:

Միսիոներական աշխատանքի մեջտեղում

Երբ ես խոսում եմ մեր երիտասարդ միսիոներների հետ, հաճախ ասում եմ նրանց, որ նրանք իրենց միսիայի մեջտեղում են: Եթե նույնիսկ նրանք մեկ օր առաջ են եկել կամ մեկ օր հետո տուն են գնալու, ես խնդրում եմ նրանց մտածել, կարծես իրենք միշտ մեջտեղում են:

Նոր միսիոներները կարող են զգալ, թե շատ անփորձ են արդյունավետ լինելու համար, և ուստի նրանք հապաղում են համարձակ խոսել կամ գործել: Փորձված միսիոներները, ուլթեր մոտ են իրենց միսիան ավարտելուն, կարող են տխրել, որ իրենց

միսիան մոտենում է ավարտին կամ դանդաղեցնել իրենց տեմպերը, մտորելով, թե ինչ են անելու միսիայից հետո:

Ինչ պայմաններում և որտեղ էլ նրանք ծառայեն, ճշմարտությունն այն է, որ Տիրոջ միսիոներները բարի լուրերի անհամար սերմեր են ցանում ամեն օր: Իրենց միսիայի մեջտեղում միշտ իրենց տեսնելը համարձակություն և էներգիա կհաղորդի Տիրոջ այս հավատարիմ ներկայացուցիչներին: Սա վերաբերում է ինչպես լիաժամկետ միսիոներներին, այնպես էլ բոլորիս:

Մենք միշտ մեջտեղում ենք

Սա մտածելակերպի փոփոխություն է, ոչ թե պարզապես մտքի հնարք: Վեհ մի ճշմարտություն կա այն մտքի ետևում, որ մենք միշտ մեջտեղում ենք: Եթե մենք մեր բնակության վայրը գտնենք քարտեզի վրա, կարող ենք ասել, որ մենք սկզբում ենք: Մակայն եթե մենք ավելի մոտիկից նայենք, որտեղ էլ որ մենք լինենք, այն պարզապես ավելի մեծ վայրի կենտրոնն է դառնում:

Ճիշտ ինչպես սա վայրին է վերաբերվում, այնպես էլ ժամանակին: Մենք կարող ենք զգալ, թե մեր կյանքի սկզբում կամ վերջում ենք, սակայն երբ մենք նայենք, թե մենք որտեղ ենք հավերժության տեսանկյունից, երբ մենք գիտակցենք, որ մեր հոգին գոյություն է ունեցել

այն ժամանակներից առաջ, որի ըմբռնումը մեր հնարավորությունից վեր է, և Հիսուս Քրիստոսի կատարյալ գոհաբերության և Քավության շնորհիվ է, որ մեր հոգին գոյություն կունենա եկող հավերժության մեջ, մենք կարող ենք գիտակցել, որ մենք իսկապես մեջտեղում ենք:

Վերջերս ես հուշում ստացա, որ պետք է վերափոխեմ իմ ծնողների գերեզմանի տապանաքարը: Ժամանակը բարի չէր գտնվել գերեզմանի հանդեպ, և ես զգացի, որ նրանց օրինակելի կյանքը հիշատակելու համար պատշաճ կլիներ ավելի նոր տապանաքարը: Երբ ես նայեցի տապանաքարի վրա ծննդյան և մահվան տարեթվերին, որոնք իրար էին միացված սովորական աննշան փոքրիկ գծիկով, կյանքի տևողության այս փոքրիկ խորհրդանիշը հանկարծ լցրեց իմ միտքն ու սիրտը անհամար հարուստ հիշողություններով: Այս փայլալավ հիշողություններից յուրաքանչյուրը կապված էր ծնողներիս և իմ կյանքի միջին հատվածի հետ:

Ինչ տարիքի էլ որ մենք լինենք, որտեղ էլ որ գտնվենք, երբ մեր կյանքում բաներ են պատահում, մենք միշտ մեջտեղում ենք լինում: Դեռ ավելին, մենք ընդմիշտ կլինենք մեջտեղում:

Մեջտեղում լինելու հույսը

Այո, մեր կյանքի ընթացքում կլինեն սկզբի պահեր և վերջի պահեր, սակայն սրանք ընդամենը մեր հավերժական կյանքի մեծ մեջտեղի նշաններն են: Լինենք մենք սկզբում, թե վերջում, լինենք մենք երիտասարդ, թե ծեր, Տերը կարող է օգտագործել մեզ Իր նպատակների համար, եթե մենք պարզապես մի կողմ դնենք ցանկացած միտք, որը սահմանափակում է ծառայելու մեր ունակությունը, և եթե թույլ տանք, որ Նրա կամքը ներգործի մեր կյանքի վրա:

Առակացում ասվում է. «Մա այն օրն է որ Տէրն արաւ, թող ցնծանք եւ ուրախ լինինք սորանում» (Մաղմուս ԾԺԸ.24): Ամուղեկը հիշեցնում է մեզ, որ «մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը» (Ալմա 34.32, շեշտադրումն ավելացված է): Իսկ բանաստեղծը գրել է. «Հավերժությունը բաղկացած է ներկա պահերից»:¹

Միշտ մեջտեղում լինելը նշանակում է, որ խաղը երբեք չի ավարտվում, հույսը երբեք չի կորչում, պարտությունը երբեք վերջնական չէ: Անկախ նրանից, թե որտեղ ենք մենք կամ ինչ պայմաններում, սկզբի ու վերջի հավերժությունները ձգվում են մեր առջև:

Մենք միշտ մեջտեղում ենք:

ՀՂՈՒՄ

1. Emily Dickinson, “Forever—is composed of Nows,” in *The Complete Poems of Emily Dickinson*, ed. Thomas H. Johnson (1960), 624.

ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Քննարկեք ընտանիքի հետ, թե ինչպես են նրանք «միշտ մեջտեղում», եթե նույնիսկ սկսում կամ ավարտում են ինչ-որ բան: Քաջալերեք նրանց լավագույն անելի իրենց ներկա գործունեության մեջ, որպեսզի չսարքեն անցյալով կամ սպասեն հաջորդ գործունեությանը կամ ծրագրին: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընտրեն մեկ բան, որ կարող են անել ընտանիքով այս խորհուրդը իրագործելու համար, և որոշեն օրը, երբ կհասնեն իրենց նպատակին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Միսիայի ձեր պատրաստությունների մեջտեղում

Նախագահ Ուիլյամսը ասում է միսիոներներին, որ մտածեն, որ իրենք իրենց միսիայի մեջտեղում են: Դուք կարող եք նաև կիրառել այս գաղափարը ձեր միսիային պատրաստվելիս. անկախ նրանից 12, թե 18 տարեկան եք, դուք կարող եք պատրաստվել միսիա ծառայելու համար:

Ի՞նչ կարող եք անել ձեր միսիային պատրաստվելու «մեջտեղում»:

- Միշտ արժանի եղեք տաճար այցելելու:
- Սովորեք ճանաչել Սուրբ Հոգու հուշումները՝ դրանք գրի առնելու և ըստ դրանց գործելու միջոցով:
- Աղոթեք միսիոներների համար:
- Խնդրեք ձեր տարածքի միսիոներներին խորհուրդ տալ ձեզ նրա վերաբերյալ, թե ինչ կարող եք անել միսիայում ծառայելուն պատրաստվելու համար:

- Սովորեք արդյունավետ ծախսել ձեր ժամանակը, կատարելով այնպիսի կարևոր գործեր, ինչպիսիք են՝ ծառայությունը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը և օրագիր վարելը:
- Երբ խոսում եք ընտանիքի անդամի հետ, կիսվեք սուրբ գրությամբ, որը վերջերս ոգեշնչել է ձեզ: Բացատրեք, թե ինչ եք մտածում այդ սուրբ գրության մասին:
- Հարցրեք ձեր ընկերներին իրենց կրոնների մասին և թե ինչին են նրանք հավատում: Ցանկացեք կիսվել նրանով, ինչին դուք եք հավատում: Հրավիրեք նրանց Եկեղեցի կամ միջոցառումներին:

Եթե դուք իմանաք, որ ձեր միսիայի պատրաստվելու մեջտեղում եք, դուք կարող եք ապրել ձեր կյանքը Տիրոջ վստահությանը և Հոգու ընկերակցությանը ավելի արժանի լինելով:

ԵՐԵԽԱՆԵՐ

Յուրաքանչյուրն էլ կարող է ինչ-որ բան անել այժմ

1. Նախագահ Ուիլդորֆը սովորեցնում է, որ անկախ նրանից, թե քանի տարեկան եք, դուք կարող եք ինչ-որ բան անել ուրիշներին օգնելու համար: Ձեր օրագրում կամ թղթի մի կտորի վրա գրեք ձեր պարզակները կամ ունակությունները: Հարցրեք ձեր ծնողներին, թե որոնք են, ըստ նրանց, ձեր պարզակները:
2. Ինչպե՞ս դուք կարող եք օգտագործել ձեր պարզակները ուրիշներին օգնելու համար:
3. Ձեր պարզակների ցուցակի վերջում գրեք մի միջոց, որով դուք կարող եք օգտագործել այդ պարզակները ուրիշներին այս շաբաթ օգնելու համար:



Ցուցադրել մեր աշակերտությունը սիրո և ծառայության միջոցով

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ակրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Իր մահկանացու կյանքի ընթացքում Հիսուս Քրիստոսը ուրիշների հանդեպ իր սերը ցուցաբերեց նրանց ծառայելով: Նա ասաց. «Մորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք» (Հովհաննես ԺԳ.35): Նա օրինակ ծառայեց և ուզում է, որ մենք «սատարենք նրանց, ովքեր [մեր] սատար կանգնելու կարիքն ունեն» (Մոսիա 4.16): Նա կոչ է անում Իր աշակերտներին աշխատել Իր հետ Իր ծառայության մեջ՝ տալով նրանց ուրիշներին ծառայելու և Իրեն ավելի նման դառնալու հնարավորություն: ¹

Որպես այցելող ուսուցիչներ մեր ծառայությունը ավելի կնմանվի մեր Փրկչի ծառայությանը, երբ մենք ցուցաբերենք մեր սերը նրանց հանդեպ, ում այցելությամբ ուսուցանում ենք, անելով հետևյալը: ²

- Հիշեք նրանց և նրանց ընտանիքի անդամների անունները և ծանոթացեք նրանց հետ:
- Միրեք նրանց առանց նրանց դատելու:

- Նրանց հետևեք և նրանց հավատքն ամրացրեք՝ «մեկ առ մեկ», ինչպես Փրկիչն էր անում (3 Նեվիի 11.15):
- Հաստատեք անկեղծ ընկերություն նրանց հետ և այցելեք նրանց իրենց տներում և որևէ այլ տեղում:
- Հոգացեք յուրաքանչյուր քրոջ համար: Հիշեք ծնունդները, ավարտական հանդեսները, հարսանիքները, մկրտությունները կամ այլ ժամանակներ, որոնք նշանակալից են նրա համար:
- Օգնեք նոր և քիչ ակտիվ անդամներին:
- Օգնեք միայնակներին կամ նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն:

Սուրբ գրություններից

3 Նեվիի 11, Մորոնի 6.4, Վարդապետություն և Ուխտեր 20.47

Մեր պատմությունից

«Նոր Կտակարանում գրվում է կանանց մասին, ում անունները հայտնի են կամ հայտնի չեն, ովքեր կիրառել են իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս: . . .

Այս կանայք դարձել են օրինակելի աշակերտներ: . . . [Նրանք] ճամփորդել են Հիսուսի և Նրա Տասներկու Առաքյալների հետ: Նրանք աջակցել են Նրան Իր ծառայության մեջ: Նրա մահից ու հարությունից հետո [նրանք] շարունակեցին լինել հավատարիմ աշակերտներ: ³

Պողոսը գրել է Փիբե անունով մի կնոջ մասին, ով եղել է «սպասար եկեղեցու» (Հռովմայեցիա ԺՁ.1): Նա խնդրել է մարդկանց՝ «հոգ տանիք նորան ինչ բան որ ձեզանից պետք ունենայ, որովհետև ինքն էլ շատերին խնամք է տարել» (Հռովմայեցիա ԺՁ.2): «Փիբեի և Նոր Կտակարանի այլ հրաշալի կանանց կողմից մատուցված ծառայությունները շարունակվում են այսօր մատուցվել Սփոփող Միության ղեկավարների, այցելող ուսուցիչների, մայրերի և ուրիշների միջոցով, ովքեր խնամում են կամ օգնում շատերին: ⁴

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Իմ արքայության դասարները. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը (2011), 105:
2. Տես Handbook 2: Administering the Church (2010), 3.2.3:
3. Իմ արքայության դասարները, 3:
4. Իմ արքայության դասարները, 6:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս եմ ես զարգացնում ուրիշների համար հոգ տանելու իմ ունակությունը:

2. Ի՞նչ եմ ես անում, որպեսզի քույրերը, ում ես այցելում եմ, իմանան, որ ես սիրում եմ նրանց:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org: